ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 13 » մարտի 2019 թվականի N: 26 ք.Գյումրի

«ԱՐԹԻԿԻ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N:992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 67-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի 2019 թվականի մարտի 11-ի N 01/16/01526-2019 գրությունը և մրցույթի մասնակից Հասմիկ Աբրահամյանի 2019 թվականի մարտի 6-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել «Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2019 թվականի մարտի 6-ին անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ մրցույթի մասնակից Հասմիկ Աբրահամյանի բողոքը քննարկող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի
2019 թվականի մարտի 13 -ի N 26 կարգադրության

ԿԱԶՄ

«ԱՐԹԻԿԻ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Կարեն Բադիշյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ,
Լիլիթ Գորգինյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ,
Իրինա Ներսիսյան	- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի առողջապահության գլխավոր կազմակերպիչ,
Մերի Կատվալյան	- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության բարեվարքության հարցերով կազմակերպչի պաշտոնակատար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է